ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 61/10180

« 30 » 05 2019 թ.

«ԱՐՄԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ա. ԵՍԱՅԱՆԻՆ
ք. Երևան, Օհանովի 53

Երևանի քաղաքապետարանի և «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 16.01.2019 թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/15-1 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ էր սահմանված՝ 1-ին եռամսյակ՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 30 օրացուցային օրվա ընթացքում, 2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2019 թվականը, 3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2019 թվականը և 4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2019 թվականը:

Ընկերության կողմից պատշաճ կատարվել են 1-ին և 2-րդ եռամսյակների համար ստանձնած պարտավորությունները, սակայն Ձեր 17.05.2019 թվականի գրության համաձայն՝ տեղեկացրել եք, որ պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված մեկանգամյա օգտագործման բաժակները այլևս չեն արտադրվում ՀՀ-ում և այդ հիմքով խնդրել եք լուծարել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի հրաժարվել է պայմանագրային պարտավորությունների կատարումից, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն պայմանագրի կատարման ապահովման տուժանքի մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 1.3 կետի՝ Համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրերի կատարման ապահովման գումարները գանձելու նպատակով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Է. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Կատարող՝ Գ. Մուրադյան
011 514-373